


ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 12

ՄԱՐՏ 2003

bezdig_mezdig@hotmail.com

ԳՆԱԿԱՏԵՆՔ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱԾՈԱՏԱՆՔԸ

Կամայ-կամայ օդերը սկսան տաքնալ, եւ իրիկունը արեւը այլեւս ուշ մայր կը մտնէ: Մեճ ուրախութեամբ կ'անդրադառնանք, որ ծմեռը վերջացաւ եւ իրարու կը փսփսանք՝ դպրոցին քանի մը ամիս մնաց միայն: Ծուտով դպրոցը կը վերջանայ:

Կ'անդրադառնանք նաեւ, որ ամիսներէ ի վեր մեր ուսուցիչներուն հետ որքան բան սորված ենք: Անոնք կը բացատրեն, կը սորվեցնեն, կը խրատեն եւ գրեթէ ամբողջ օրը մեզի կ'ընկերակցին: Իսկ մենք ի՞նչպէս կը գնահատենք անոնց աշխատանքը: Ճիշդ է, Մարտ Զին աշակերտները ճաղիկներով եւ քիչ մը աւելի ժպտուն դէմքերով բարեւեցին իրենց ուսուցիչները: Սակայն պէտք է ջանք թափենք, որ այդ ուրախ ոգին միայն մէկ օրուան համար չըլլայ, եւ մենք, թէեւ՝ առանց տօնական մթնոլորտի, բայց նոյն ուրախութեամբ ու սիրով աշխատինք մեր ուսուցիչներուն հետ:

ԳԱՐՈՒՆ



Լալէ Բագրատունի, Ե. դասարան
Ալգ. Եղիշէ Մանուկեան վարժարան

Երկինքը պայծառ է, արեւը իր լուսաշող ճառագայթները կը սփռէ ամէն կողմ, ճառերը սկսած են կանաչ հագուստներով ճաճկել իրենց մերկութիւնը, գունագեղ ճաղիկները ուրախութիւն կը պատճառեն մեզի:

Այս գեղեցիկ տեսարանները դիտելով ես ալ կ'ուրախանամ, եւ հոգիս ծմբան ճանրութիւնը կը մոռնայ:

Մեճերուն կեանքին մէջ դուր՝ փոքրերդ գարուններ էք:

Մեր նախահայրերը խելացի էին, երբ անոնք տարուան եղանակներուն անունները պիտի գրէին, նախ տեղ կու տային ամէնէն փոքրիկին՝ Գարունին (գարուն, ամառ, աշուն, ծմեռ): Անոնք

(Ծար.ը՝ էջ 7)

ՄԵԾ ՊԱԿՔԸ



ԱԿԼԱՍԻՉ

Միջինքը, որ պահքը կը կիսէ, միեւնոյն ժամանակ կ'աւետէ Գարունը: Այդ օրը նշանաճներու ընտանիքներ իրարու տուն կ'երթան յատուկ ճաշերով, դաշտերը վրօսնելու կ'ելլեն, կ'երգեն, կը պարեն, կը զուարճանան, որպէսզի կարենան շարունակել պահքին մնացած օրերը:

ԱԿԼԱՍԻՉ


հայկական տօնացոյցին մէջ Բարեկենդանի ուրախութեան ու կերուխումին կը յաջորդէ Մեճ պահքի շրջանը, որ կը տեւէ եօթը շաբաթ եւ կը յատկանշուի զսպուածութեամբ ու ժուճկալութեամբ:

Մեճ պահքի առաջին օրն իսկ իւրաքանչիւր անհատ պարտաւոր է հաշտուելու, մաքրուելու եւ իր հարցերը լուծելու: Որպէսզի յետոյ հաղորդուելու իրաւունք ունենայ, հին հայկական սովորութեան համաձայն, ամէն մարդ պարտաւոր է եկեղեցի երթալու եւ ինքզինք պատրաստել յառաջիկայ եօթը շաբաթներու համար: Պահքի շրջանին արգիլուած է ուտել կենդանական ճագում ունեցող բոլոր ուտելիքները: Փոխարէնը պէտք է բաւարարուիլ բոյսերով, բանջարեղէններով, ընդեղէններով եւ բուսական ձէթով... Պահքի հայկական նշանաւոր ուտելիքներն է սիսեռի թօփիկը:

Բարեկենդանի օրը ժողովուրդը կը վննտէր Ուտիս պապին եւ կը հրաւիրէր Պասս պապին, որ կը մարմնաւորուէր սոխով մը՝ վրան եօթը փետուրներով: Երբեմն կը շինուէր խամաճիկ մը, որուն ճայրը կը դրուէր սոխը եւ փետուրները, որոնք երբեմն կը ներկուէին, իւրաքանչիւր շաբաթուան վերջը մէկ փետուր կը հանէին եւ այդպէս կը հաշուէին Մեճ պահքին մնացած շաբաթներուն թիւը:



ملحق أرتاك



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԻՉՏԸ՝ ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Երիտասարդ երաժիշտ եւ յօրինող Կի Մանուկեան 28 Մարտին «ԵՈՒՆԵՍԿՕ»-ի սրահին մէջ պիտի ունենայ ելոյթ մը: Դաշնակահար արուեստագետին ելոյթին պիտի ընկերանայ նաեւ տասներկու երաժիշտներէ բաղկացած իր նուագախումբը:

Կի Մանուկեան դաշնակ նուագելու սկսած է չորս տարեկանին: Ան առաջին անգամ պատկերասփիւռէն ելոյթ ունեցած է վեց տարեկանին, իսկ ութ տարեկանին արդէն իսկ յօրինած է իր առաջին գործը, որուն համար արժանացած է մրցանակի:

1997էն ի վեր Կի Մանուկեան կը ներկայացնէ արհեստավարժ մակարդակի մեծ թիւով նուագահանդէսներ, որոնք կը սիրուին ու կը գնահատուին թէ՛ հայ, թէ՛ լիբանանցի եւ թէ՛ այլ երկիրներու ունկընդիրներուն կողմէ: 2000 թուականի Լիբանանի յօրինումներու մրցանքին Կի Մանուկեան 1500 յօրինողներու մէջ հանդիսացաւ առաջին: Նոյն թուականին ան պարգևատրուեցաւ Լիբանանի նախագահ Էմիլ Լահուտի կողմէ:

Անցնող ամիսներուն Կի Մանուկեան Լիբանանի եւ արաբական երկիրներու մէջ ունեցաւ երաժշտական շրջապտոյտ մը՝ «Բարէմ միւլիք թուրք»ը: Արուեստագետը ներկայացուց իր երաժշտական գործերը եւ մանաւանդ՝ իր «Բարէմ միւլիք քլապ»էն օրինակներ:

28 Մարտի ելոյթը կազմակերպուած է Ազգային վարժարաններու Ուսումնական Խորհուրդին կողմէ: Ազգային վարժարան յաճախած Կի Մանուկեան իր ելոյթը կը նուիրէ ազգային վարժարաններուն:



ՁԱՅՆԱՊՆԱԿՆԵՐ

- «Անդամ» (1997)
- «Սենսըլ» (1999)
- «Քրիսթմըս թրու տը այլ աֆ Կի Մանուկեան» (1999)
- «Բարէմ միւլիք քլապ» (2001)
- «Անվերնագիր» (2003)

ԴԱՏԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԵՊ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄՔԻՆ ՊԱՏՄԱԾ ՆՈՐ ԴԵՔԻԱԹԸ՝ «ԵՐԿՈՒ ԲԱՐՏԻ»Ն



Թատերախաղին նիւթը հետեւեալն է. Արեգնապ մայրիկը կը փնտռէ անտառին մէջ կորսուած իր մանչուկները Վահիկը (Գէորգ Յովսէփեան) եւ Աւետիքը (Յակոբ Չոգապեան): Սակայն անոր դիմաց կ'ելլէ Չար Վհուկին (Սելին Պարիպեան) անտառին պահպան Պաղտօ արջուկը (Կարօ Անտոնեան): Ան կ'որոշէ իր ընկերները՝ մէսիէօ Փիսոն (Պետիկ Սողոմոնեան եւ Նապօ Թովմասեան) եւ Պուրծիկ շնիկը (Կրայր Գալէմբէրեան եւ Ծանթ Պաղտասարեան) օգնութեան կանչել, որպէսզի Արեգնապ մայրիկը կարողանայ կատարել Չար Վհուկին դրած պայմանները եւ գտնել իր կորսուած տղաքը:

ճեռքի տալով միասին կը յաջողին յաղթել Չար Վհուկին եւ ապա տել Աւետիքն ու Վահիկը, որոնց Չար Վհուկը վերածած էր... երկու բարտիի:

Գոյներու, լոյսերու եւ երգերու հեքիաթային այս աշխարհը իր գեղեցիկ պատմութեան եւ ներկայացման միջոցով մանուկ ու պատանի հանդիսատեսներուն փոխանցեց հնազանդութեան, քաջութեան, աշխատասիրութեան եւ ամէնէն կարեւորը՝ ընկերներուն օգնելու դասերը:

Դեքիաթներու աշխարհները ամէն տարի բեմ հանող մանուկ եւ պատանի դերասանները այս տարի եւս գեղեցիկ պատմութիւն մը ներկայացուցին Վիրենք սպասող հանդիսատեսներուն: Անշուշտ խօսքը համապատասխան է «Արեգ» մանկապատանեկան թատերախումբին մասին է, որ 8, 9, 15 եւ 16 Մարտի երեկոյեան ժամը 5:00ին, «Յովհաննէս Պողոսեան» թատերախումբին մէջ ներկայացուց «Երկու բարտի» թատերախաղը:


Արեգնապ մայրիկին փոքրիկ տղան՝ ճարպիկ Յովիկը (Կրակ Փափապեան) անտառ կը հասնի օգնելու համար իր մայրիկին: Բոլոր հերոսները ճեռք





ՄԱՐԶԱԿԱՆ

«ՖՈՐՄՈՒԼԱ 1»Ի ՄՐՅԱԾԱՐՔՐԸ ԵՒ ՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐ



Մարտ 9-ին Աստրալիոյ մէջ սկսաւ ինքնաշարժներու «Ֆորմուլա 1»ի մրցումի 2003ի եղանակը: Երկու շաբաթը անգամ մը շաբաթավերջերուն տեղի ունեցող այս մրցաշարքը անցնող տարուան ընթացքին դժգոհ ձգեց իր համակիրներուն մէկ մասը, որովհետեւ մրցաշարքին ընթացքին տիրապետեցին մէկ խումբ եւ մէկ վարորդ՝ Ֆեռարին եւ Մայքըլ Շումպերըրը:

Այս պատճառով «Ֆորմուլա 1»ի ֆետերասիոնը որոշեց 2003ի համար դնել մրցումի նոր օրէնքներ, որոնք աւելի դժուար ու հետաքրքրական պիտի դարձնեն մրցաշարքը:

ԻՆՉ ՓՈՒՈՒԱԾ Է

– Առաջին նայուածքով «Ֆորմուլա 1»ի փայլուն ինքնաշարժները այս տարի նոյն ձեւը ունին, սակայն, հակառակ նախորդ տարիներուն, վարորդները կարեւորութիւնը պիտի չունենան ցուցմունքներ ստանալու իրենց կառատունքին:

– Իւրաքանչիւր մրցումէ քանի մը ժամ առաջ մասնագէտներ մեծ կգուշուրեամբ պիտի քննեն ինքնաշարժները, որպէսզի որեւէ փոփոխութիւն կատարուած չըլլայ անոնց մէջ:

– Մրցումէն մէկ օր առաջ տեղի ունեցող եւ մեկնարկի դիրքին համար եղած մրցումին ընթացքին իւրաքանչիւր վարորդ իրաւունք ունի միայն մէկ անգամ քջելու որոշ տարածութիւն մը: Նախապէս ան առիթ ունէր քանի մը անգամ փորձելու, մինչեւ որ հասնէր լաւագոյն արդիւնքին:

– Այս տարի «Ֆորմուլա 1»ի մրցաշարքին պիտի մասնակցին միայն տասը խումբեր:

– Յառաջիկայ տարի առաջին անգամ ըլլալով, «Ֆորմուլա 1»ի մրցումներ տեղի պիտի ունենան Պահրէյնի եւ Չինաստանի մէջ:


ԱՄՏՂԵՐՈՒ ԱԾՈՒՐԻՆ

ՄԱՏՈՆԱՆ՝ ԴԵՔԻԱՅՆԵՐ ԳՐՈՂ ԵՐԳՉՈՒԻՑԻՆ

Փոփ երգարուեստի կուլթերէն երգչուհի Մատոնա որոշած է երգի, պարի եւ դերասանութեան իր ծիրքերուն կողքին վարձապէս ալ ծիրք մը եւս: Արուեստագիտուհին սկսած է գրել մանուկներու յատուկ հեքիաթներ: Ան արդէն իսկ համաձայնութիւն կնքած է «Փենկուէն» հրատարակչատան հետ՝ գրելու համար հեքիաթներու հինգ գիրքեր:

Մատոնայի հեքիաթներու առաջին գիրքը լոյս պիտի տեսնէ Սեպտեմբեր ամսուն: Գիրքին անունը պիտի ըլլայ «Ինկլիշ ռոպըզ» («Անգլիական վարդեր») եւ պիտի պատմէ կարմիր գայլի մը եւ փոքրիկ իշխանի մը արկածախնդրութիւններուն մասին:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ



●19 Փետրուար 2003ին տեղի ունեցաւ հայաստանի նախագահական ընտրութիւններու առաջին փուլը, որուն մասնակցեցան 9 թեկնածուներ. բարձրագոյն քուէները հաւաքող երկու թեկնածուները՝ Բուպերթ Քոչարեան եւ Ստեփան Դեմիրճեան անցան երկրորդ փուլ: Մարտ 5ին տեղի ունեցաւ նախագահական ընտրութիւններուն երկրորդ փուլը եւ նախագահ ընտրուեցաւ Բուպերթ Քոչարեան:

●Լիբանանի մէջ խենթ Մարտին անունը խլեց խենթ Փետրուարը, որուն փոթորիկին, տեղատարափ անձրեւին, ծիւնին, ողողումին պատճառով վնասուեցան բազմաթիւ դաշտեր եւ պարտէզներ, նաեւ քանդուեցան տուներ եւ պատահեցան հողի սահանքներ:

●Շարմէլ Ծէյխի մէջ Մարտ 1ին տեղի ունեցաւ Արաբական Կիկայի 15րդ վեհաժողովը, որուն մասնակցեցան 22 երկիրներու նախագահներ, թագաւորներ եւ վարչապետներ: Ժողովը հաղորդագրութեամբ մը մերժեց Իրաքի դէմ պինուորական որեւէ գործողութիւն:

●ՄԱԿի զէնքի քննիչներու յայտարարութեան շուրջ ամիս մը ետք, հակառակ Իրաքի կողմը պիջումներուն (արգիլուած հրթիռներու փճացում), Մ. Նահանգներ տակաւին կը խօսին պատերազմի հաւանականութեան մասին:



ԿԱՐՑ ԼՈՒՐԵՐ

◆ Աշխարհին մէջ 120 միլիոն պատիկներ դպրոց չեն երթար: Դպրոց չգացող աղջիկներուն թիւը անլի շատ է, քան մանչերունը: Բետեաբար այս պակասը ամբողջացնելու համար ԵՈՒՆԻՍԷՖ կ'աշխատի նոր ծրագրի մը՝ «25 միլիոն 2005»-ի վրայ: Ծրագրին նպատակն է դպրոց ուղարկել Ափրիկէի եւ Ասիոյ բոլոր աղջնակները:

◆ Տարեկան 5 միլիոն մարդ կը մահանայ ճիւղատի պատճառով: Բետեաբար եւրոպական Միութիւնը որոշած է ամէնէն ուշը 2005 թուականէն սկսեալ արգիլել ճիւղատի բոլոր ճանուցումները:

◆ Դանիացի նշանաւոր գրագէտ Բանս Բրիսթիան Անտըրսըն (1805-1875), որ գրած է «Լուսկի ճախող աղջիկը», «Թագաւորին նոր

զգեստը», եւ այլ հեքիաթներ, կը սիրէր նաեւ ստեղծել կտրտուած թուղթերով պատկերներ: Անոնցմէ մէկը ծախած է մօտաւորապէս 70 հազար տոլարի:

◆ 2002 տարուան ընթացքին կենդանաբանական պարտէկներուն մէջ ճնած են տասներկու արջակատուներ (փանտա): Անոնցմէ միայն տասը հատը ապրած է: Ասիկա լաւ լուր մըն է, որվհետեւ բնութեան մէջ մնացած է միայն մօտաւորապէս հազար արջակատու:

◆ Ըստ կարգ մը ուսումնասիրութիւններու, պատիկներու նախաճաշին կերած քորնֆելքները տիպար սննդաբար ուտելիքը չեն: Անոնք շատ իւղոտ են, շատ շաքարոտ... մէկ խօսքով՝ ոչ շատ առողջապահական:

■

ԹԱՊՈՒԱԾ ՊԱԼԱՏԸ ԳՏՆՈՒՆԵՑԱԻ

Շուրջ 2000 տարի առաջ Իտալիոյ Բոռոմ մայրաքաղաքին ամէնէն շքեղ կառոյցներէն մէկն էր Փափիրի պալատը, որ Բրիստոսէ առաջ 79 թուականին թաղուած է Վեպիվիոյ լեռան հրաբուխին տակ:



Յուլիոս Կեսարի պատկանող Փափիրի պալատը հռչակաւոր էր իր գրադարանով եւ հին մագաղաթներով:

Վերջերս գետնին տակէն յայտնաբերուած այս պալատին աներակները սկսած են ընդունիլ քիչ թիւով այցելուներ: Բետաքրքրական նորութիւն է այն,

որ պալատը, հակառակ գիտնականներուն կարծածին, կը բաղկանայ մէկի փոխարէն երկու յարկէ: Ուրեմն, տակաւին պիտի շարունակենք փորել եւ նորութիւններ գտնել:

■

ԼՈՊԱՅՈՂ ՄԱՐԶԱԿՕԾԻԿՆԵՐ

Կ'ուզէք տեսնել լողացող մարպակօջիկներու հսկայ թիւ մը: Այցելեցէ՛ք Խաղաղական ովկիանոս:



«Նայք» վաճառանիշի հազարաւոր մարպակօջիկներ կը ծփան Խաղաղական ովկիանոսին հիւսիսը: Անոնք սխալմամբ թափած են վիրենք փոխադրող բեռնատար նաւ մը: Այս «աղբը» կ'ապականէ ովկիանոսին ջուրը եւ կը խանգարէ ճովային անասուններուն կեանքը:

«Նայք» ընկերութիւնը կոչ ուղղած է իրեն ուղարկելու «գտնուած» կօշիկները, որոնց նիւթը կարելի է վերստին գործածել ճաճկելու համար պասքեթպոլի դաշտեր:

Միւս կողմէ, Խաղաղականի եզերքը պտտող բախտաւորները թեւեա կրնան ունենալ կոյճ մը նոր, բայց թրջուած մարպակօջիկներ:


ՄՔՏՈՆԱԼՏԾԻ ՄԵՋ՝ ՊՏՐՈՂ

ՄՔՏՈՆԱԼՏԾը իր սովորական հեմպրկըրներուն, չիքըն նակէթներուն ու տապկուած գետնախնձորներուն կողքին, տոպրակ մը խնձոր ու խաղող պիտի սկսի հրամցնել իր յաճախողներուն:

Անոր այս նոր ճաշացուցակը պիտի սկսի հրամցուիլ Ապրիլին, Լոնտոնի մէջ: Իսկ Խնչն է կը կարծէք այս փոփոխութեան պատճառը:



ՄՔՏՈՆԱԼՏԻ ճաշերէն յաճախ ուտող փոքրիկներուն մեծ մասը կը գտնուի սոնթութեան՝ չափէն անլի գիրնալու վտանգին տակ:

Ձեր գրոպիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdig_mezdig@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի խմբագրութեան, «ԱԶԴԱԿ», «Ծաղկոյեան» կեդրոն



Computer Echo

Echo PC With The Intel Pentium 4 Processor, The Center Of Your Digital World

Take Outstanding Digital Photos
Play Intense 3-D Games
With Echo PC And The Intel Pentium 4 Processor

Computer Echo S.a.r.l Lebanon
Tel 1-488106 (15 lines) Fax 488109
Cell 734298 / 624714
e.mail echo@dm.net.lb
Saloumeh Hyway Ariss Center
Beirut Lebanon

Echo Dubai L.L.C. UAE
Khaled Bin Al-Waleed St.
Mohd Sultan Beishalat Bldg.
Tel 971-4-3930091 Cell 971-5-4544072
e.mail echodxb@emirates.net.ae

2001 Intel Corporation, All Rights Reserved, Intel Inside Logos, pentium 4 processor logo and Intel Netburst are trademarks of Intel corporation or its subsidiaries in the united states and other countries. Other brands and trademarks are the property of their respective owners.



ՈՍԿԻՆ ՓՈՔՐՈՎ ԱՐՁԱՆԻԿԸ՝ «ՕՍՔԱՐ»Ը

Ամէն տարի Մարտին Բոլիվուտի մէջ տեղի կ'ունենայ շարժապատկերի ամէնէն նշանաւոր մրցանակին՝ «Օսքար»ին պարգեւատրումը: Այս հանդիսութեան ընթացքին Ճարժապատկերի Ակադեմիան մրցանակներ կու տայ տարուան լաւագոյն դերասաններուն, բեմադրիչներուն եւ շարժապատկերի այլ աշխատողներուն:

Այս տարի «Օսքար»ներու հանդիսութեան 75ամեակն է, եւ 23 Մարտին տեղի պիտի ունենայ սպասուած հանդիսութիւնը:

Ձեզի կը ներկայացնենք «Օսքար»ի թեկնածուներու ցանկին մէկ մասը.

- ԳԼԽԱԽՈՐ ԴԵՐԱՍԱՆԻ «ՕՍՔԱՐ»Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ
 - Էտրիէն Պրոտի.- «Տը Փիէնիսթ»
 - Նիքոլըս Բէյճ.- «Էտէփթէշըն»
 - Մայքըլ Բէյն.- «Տը քուայթ Էմբրիթէն»
 - Տենիէլ Տէյ-Լիուիս.- «Կէնկ Կաֆ Նիւ Եորք»
 - Ճէք Նիքոլսըն.- «Ըպաուր Ճմիթ»


- ԳԼԽԱԽՈՐ ԴԵՐԱՍԱՆՈՒԹԻ «ՕՍՔԱՐ»Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ
 - Սալմա Բայթ.- «Ֆրիտա»
 - Նիքոլ Բիտմըն.- «Տը աուրրոյ»
 - Տայան Լէյն.- «Անֆէյթֆոլ»
 - Ճիլիէն Մուր.- «Փար ֆրամ հեւըն»
 - Ռընէ Ջելուէկըր.- «Ճիքակօ»

- ԼԱՌԱԳՈՅՆ ԺԱՊԱԽԵՆԻ «ՕՍՔԱՐ»Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ
 - «Ճիքակօ»
 - «Կէնկ Կաֆ Նիւ Եորք»
 - «Տը աուրրոյ»
 - «Տը լորտ Կաֆ տը Կիւնկ - տը թու թաուրրոյ»
 - «Տը փիէնիսթ»

- ԼԱՌԱԳՈՅՆ ԿԵՆԴԱՆԻ ԳԾԱՆԿԱՐԻ «ՕՍՔԱՐ»Ի ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ
 - «Այս էլճ»
 - «Լիլօ Էնտ Սթիչ»
 - «Սփիրիթ, Սթէլիըն Կաֆ տը Սիմորոն»
 - «Սփիրիթըտ ըուէլ»
 - «Թրէժըր փլէնէթ»

«Օսքար» արձանիկը, որ կը տրուի իւրաքանչիւր մրցանակ շահողի, ոսկիէ շինուած փոքր արձանիկ մըն է: Ան կը ներկայացնէ ասպետ մը, որուն ձեռքին մէջ կայ սուր մը: Ասպետը կանգնած է կլոր պատուանդանի մը վրայ, որ ունի հինգ «կոճակներ»: Անոնք կը խորհրդանշեն Ճարժապատկերի Ակադեմիային տուած սկիզբի հինգ «Օսքար»ները:

- Գիտէ՞ր, թէ...
 - «Օսքար»ի արձանիկ մը պատրաստելու համար 12 հոգի պէտք է 20 ժամ աշխատի:
 - «Օսքար»ի հանդիսութեան ընթացքին անհրաժեշտ է 65 արձան:



- Մինչեւ հիմա բաշխուած են 2455 «Օսքար»ի արձանիկներ:
- «Օսքար»ի արձանիկները միշտ նոյն չափով չեն եղած: Տարիքով փոքր դերասաններու համար շինուած են փոքր արձաններ, իսկ նշանաւոր Ուոլթ Տիւիթիին տրուած է իսկական մարդու չափով արձան մը եւ եօթը փոքր արձանիկներ, որոնք կը խորհրդանշեն Ձիւնաթոյրը եւ եօթը թզուկները:

Իրաքի դէմ պատերազմի հաւանականութիւնը եւ ատոր պատճառած իրարանցումը կարճել տուաւ, որ «Օսքար»ներու 75րդ հանդիսութիւնը պիտի չեւտածուի: Սակայն «Օսքար»ները պիտի բաժնուին 23 Մարտին՝ առանց աւելի սպասելու անհամբեր դերասանները:

Բետաքրքրական է, որ «Օսքար»ներու հանդիսութիւնը յետաձգուած է միայն երեք անգամ. 1938ին՝ երբ Լոս Անճելըսը ջուրով ողողուած էր, 1968ին՝ երբ «Օսքար»ի հանդիսութեան օրը՝ 8 Ապրիլը վուադադիպեցաւ Մարթին Լուտըր Քինկի թաղումին 1981ին՝ երբ նախագահ Ռոնալտ Ռեյկընի դէմ մահափորձ կատարուեցաւ:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԱՅՈՒՐԱԹՆ


ԳԱՐՆԱՆ ԹՈՉՈՒՆԸ՝ ԾԻՃԵՌՆԱԿԸ

Ծիճեռնակները քիչ թէ շատ տարածուած են աշխարհի բոլոր կողմերը. անոնք ունին նիհար ու սլացիկ մարմիններ եւ երկար թեւեր. անոնց ոտքերը շատ կարճ են, հետեւաբար ծիճեռնակները կը նախընտրեն թռչիլ, քան՝ քալել:


Ծիճեռնակները կը սնանին միջատներով. կոյզ մը ծիճեռնակներ 1 ամսուան ընթացքին կը սպառեն աւելի քան 100 հազար միջատ: Անոնք կ'որսան թռչելու ընթացքին՝ կտուցը լայն բանալով ու բռնելով միջատները: Կը խմեն միւլեւոյն ձեւով՝ կտուցնին լայն բացած, սակայն այս անգամ ջուրին մակերեսէն անցած ատեն: Ծիճեռնակները կ'ոչնչացնեն վնասակար միջատները:

Ծիճեռնակները կ'ապրին խումբերով եւ իրար կ'օգնեն վտանգի մը պարագային: Երոպայի ծիճեռնակները կը գաղթեն Սեպտեմբերին՝ դէպի Ափրիկէ: Անոնք կը վերադառնան իրենց ծննդավայրը, երբ օրերը տաքնան: Մարդիկ կ'ըսեն, թէ անոնք «Գարունը կը յայտարարեն»:

- Մարմնի չափ - 10 - 23 սմ.
- Ծանրութիւն - 20 կրամ
- Ազգականներ - կան 79 տեսակ ծիճեռնակներ
- Բնակավայր - աշխարհի բոլոր կողմերը՝ բացի բեւեռներէն
- Ճաշացուցակ - միջատներ




Կրնա՞ս կոյզ-կոյզ խմբել առարկաները:



Կրնա՞ս օգնել թիթեռնիկներուն՝ կիրար գտնելու համար:




Կրնա՞ս գտնել այս տեսարանին մէջի անբնական մանրամասնութիւնները:



Կէտերը իրարու միացուր 1 - 37՝ ամբողջացնելու համար պատկերը:

ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի ճարաթ, 22 Փետրուար 2003ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:



Պզտիկ-Մզտիկ պէտք է վերջացնէ մրցումը 158 երկվայրկեանէն: Ան ի՞ր ծամբէն պէտք է երթայ:

	+		×	=	10
	×		+	=	20
	+		-	=	30
	×		×	=	40

Կրնա՞ս ամբողջացնել տախտակը՝ գտնելով պակաս թիւերը:

★ ՈՒՃԱԴՐՈՒԹԻՒՆ ★

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին գծագրութիւններ դրկել «ՊԶՏԻԿ-ՄԶՏԻԿ»ին, որպէսզի կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել, թող հաճին նկատի ունենալ հետեւեալ չափը, 29.5 cm x 21 cm:

ԱՏՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ Յէն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք կայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջող թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 12

- 1.- Ի՞նչ կը խորհրդանշեն Ազլատիպին վրայի եօթը փետուրները:-----
- 2.- Այս տարի «Օսքար»ներու քանիերբրդ հանդիսութիւնն է:-----
- 3.- Ի՞նչով կը սնանին ճիճեռնակները:-----



Անուն - Մականուն -----
 Վարժարան -----
 Ծննդեան թուական -----
 Բեռածայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 11Ի ԾԱԲՈՂԸ

Բարցարան թիւ 10ի շահողը Վիթի էքսէքճեան (13 տարեկան «Բայ Անտ. Ծամլեան-Թաթիկեան»էն) շահեցաւ անցեալ ամստան մրցումը: Ան ի՞ր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, «Ճաղպոյեան» կեդրոն:



Թ Ա Ռ Ա Մ Ա Ջ Մ Ե Ղ Ո Ռ Ն



Անտառին խորը հսկայ ճառի մը փչակին մէջ մեղունները շինքեր էին իրենց փեթակը:

Փեթակին մոմէ ծուլուած բազմաթիւ բջիջները լեցուն էին ոսկի մեղրով կամ սպիտակ ծուլերով եւ կամ՝ թրթուրներով:

Այդ բջիջներէն մէկէն դուրս սողաց մանուկ մեղուն:

Իսկոյն անոր դէմը վազեց դայեակ մեղու մը:

– Օհ, բարեւ, փոքրիկս, գալուստդ բարի, ատ ինչ սիրուն եւ ինչ թաւ մազեր ունիս, եկուր, անունդ դնենք Թաւամազ՝ ըսաւ ու նորաճինը մաքրեց, յարդարեց ու առատ կերակրեց մօտի մեղրի պաշարէն: Եւ երբ Թաւամազը լաւ մը կշտացաւ, դայեակը տարաւ պայն դուրս:

Աստուած իմ, ինչ լոյս էր, ինչ պայծառ: Թաւամազը իսկոյն բացաւ թեւերը եւ թռաւ: Տեսաւ իր շուրջը կանաչ, իսկ վերը՝ մաքուր կապոյտ երկինք, եւ ինչ անուշ կը բուրէին վարէն ճառերն ու ճաղիկները:

Մեղուն սլացաւ ու ուրախ պտոյտներ գործեց օդին մէջ:

– Էյ բարեկամ, ինչ կ'ընես հոտ,– հարցուց պառաւ մեղու մը:

– Կը կուարձանամ.– պատասխանեց Թաւամազը:

– Կը կուարձանամ, դէ Աստուածդ սիրես.– հեզնեց պառաւը.– հիմա բոլորս աշխատանքի վրայ ենք. ինչ քէֆի ժամանակ է. այդպէս առոյգ, այդպէս առողջ, մազերդ ալ այնպէս թաւ ճաղիկի փոշին իսկոյն վրան կը կպչի: Թռիր ետեւէս, ես քեզի կը սորվեցնեմ:

Մեծ մեղուն այնպէս արագ կը թռչէր, որ Թաւամազը հապի կը հասներ ետեւէն:

Մեծ մեղուն մտաւ ահագին կապոյտ ճաղիկի մը բաժակը, սկսաւ ճճել անոր նեկտարը. քսեց ետեւի ոտքերուն ու գնաց ճաղիկի

դեղին փոշիի ամաններուն վրայ:

Թաւամազն ալ նոյնը ըրաւ: Յանկարծ, երբ նայեցաւ ինքզինքին ու պառաւ մեղուն, ճիճաղը չկրցաւ բռնել: Երկուքն ալ դեղին եղած էին:

– Ի՞նչ, հաւնեցա՞ր,– ըսաւ մեծ մեղուն.– դէ երթանք տուն: Բապի փեթակ մտեր էին, որ փեթակի բոլոր դայեակներն ու բանուորները վրայ թափեցան եւ կերան Թաւամազին հաւաքած դեղին փոշին:

– Բան չկայ, անօթի եմ.– ըսաւ մեծ մեղուն: Եւ Թաւամազը առաջնորդեց շտեմարան, ցոյց տուաւ, թէ ինչպէս պէտք է լեցնէ մեղրը մոմէ բջիջներուն մէջ:

Ու Թաւամազը դարձաւ նեկտար ժողովող: Յոգնեցնող աշխատանք էր, ծիշդ է, բայց կարեւոր էր:

Օր մը, երբ Թաւամազը բեռնաւորուած դաշտէն տուն կը դառնար, տեսաւ փեթակին շուրջ անսովոր իրարանցում մը, կը լսուէր սաստիկ բզկոց ու սարսափելի գոռոց:

Մօտեցաւ ու վարմացաւ, որ բոլոր մեղունները դուրս էին թափեր ու պտոյտներ կը գործէին փեթակին շուրջը: Այնպէս կատղեր էին ու իրար խառնուէր, որ ոչինչ կը հասկըցէր: Միայն յայտնի էր, որ թշնամի մը յարձակած էր, մօտեցաւ եւ ինչ տեսնէ. իսկական թշնամի մը՝ հսկայ արջը...:

Ետեւի թաթերուն վրայ կեցած՝ ան մրթմրթալով կը դառնար ճառին շուրջը, իսկ առջեւի թաթերովը կ'աշխատէր հասնիլ մեղրի պահեստին:

Յանկարծ արջը քաշեց, փրցուց ճառի կեղեւին մէկ կտորը, ուրկէ դուրս խուճեցին ներսը մնացած մեղունները: Արջը մէկ թաթովը կը պաշտպանուէր անոնց յուսահատ յարձակումէն, իսկ միւս թաթը կը կոխէր փեթակին խորքը, ուր մեղրի շտեմարանն էր. կը

հանէր դուրս ու ագահաբար կուլ կու տար ոսկեգոյն անուշ մեղրը:

Թաւամազը ինքզինքը գսպել չկրցաւ ու կատաղօրէն նետուեցաւ արջին վրայ ու խայթեց անոր աչքը: Արջը մռնչեց սաստիկ ցաւէն ու փախաւ:

Բայց խեղճ Թաւամազը իր պայրոյթէն այնպէս խորն էր խայթեր, որ խայթոցը մնացեր էր արջի աչքին մէջ: Խեղճը յանկարծ թուցաւ, ինկաւ գետին՝ իրեն նման ուրիշ բազմաթիւ նահատակներու քով եւ աչքերը յափտեան գոցեց:

Բայց մեռնելու ատեն ան չէր պղջար իր ըրածին համար. չէ որ փեթակին ապատուծեան համար կոհեր էր իր կեանքը. իր տան համար, իր հարապատներուն համար:



ԳԱՐՈՒՆ

Ծարունակուած՝ Ա. Էջէն

գիտէին, որ ամէն բան գեղեցիկով, պստիկով ու թարմութեամբ կը սկսի:

Մանուկներուն ներկայութիւնը գարուն կը ներշնչէ: Դուք կեանքին գունագեղ ճաղիկներն էք, ձեր ժպիտները արեւաշող ճառագայթներ են, ձեր խաղն ու շարժուն վիճակը թարմութիւն կը բուրէ:

Ճիշդ է, որ դուք գարուն կը ներշնչէք, բայց չկարճէք, թէ բոլորդ նոյնն էք: Ձեզմէ իւրաքանչիւրը ունի կեանքին մէջ իրեն յատուկ հոտն ու բոյրը:

Այսքան գովասանքէ ետք յիշեցնեմ նաեւ, որ գարունը գեղեցիկ ըլլալու կողքին աշխատասէր է: Մաղթեմ, որ աշխատասէր մնաք նաեւ դուք՝ սիրուն գարուններ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿԱՍ

Իմ դաստիարակս շատ խիստ է, անոր հետ, որ ստախոս է եւ անկիրթ ու շփացած:

Իմ դաստիարակս ներող է, անոր հետ, որ չարածծի է եւ երբեմն՝ քիչ մը ճոյլ:

Իմ դաստիարակս սիրելի, կը խոստանամ ըլլալ բարի, ու ազգիս ըլլալ արժանի:

ՃԱՆԹ ՊԱՊՏԱՍԱՐԵԱՆ
Դ1 դասարան
Բ. եւ Մ. Արսլանեան –
Ճեմարան

ԱՆՈՒԾԻԿ
ԴԱՍԱՐԱՆՍ

Իմ դասարանս ընդարձակ, պատերն ու առաստաղը ծերմակ,

ունի շատ մեծ գրատախտակ ու վարդարուն մեծ ցուցատախտակ:

Իմ անուշիկ դասարան, քեզ պիտի տամ իմ ընձան, գիրքերով գրադարան եւ գեղեցիկ պահարան:

ՃԱՆԹ ՊԱՊՏԱՍԱՐԵԱՆ
Դ1 դասարան
Բ. եւ Մ. Արսլանեան –
Ճեմարան



ԱՆԻ ԴԱՐԲԻՆԵԱՆ,
Ջ. դասարան, Մեսրոպեան վարժարան

Magic Toys
Where Great Ideas Come To You

Designed by Binpub - 03/337015

Wide variety of
Easter Trees
& Accessories

Educational Toys

Bicycles

HAPPY EASTER

Bourj Hamoud, Marash Street Tel.: 01/260724-03/463180



ՔԱՌԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՃԱԿԵՐՏՆԵՐՆ

Հարգելի ձեռքեր
զարե՛ն՝ Արարի Անուշեւորն
ու Պարիկ Արիկի՛ շունչը պիտի մեզ
ԲՆՈՒՄԻ մեծար զատուցէ ձեր
ազնուքներս մեր զօրեակաւորութե
և հոգիով
ձեռք որ ձեռք մարմն մէջէն որս
կորստանայ ձեր զոր հաւանք
Պարիկ Արիկով, որուն հոգիով
վարդունն մեզ
եւ մարմնով ձեզի յարաւոր
յարգութեան հոգիով մասնակոր
դասարաններու ազնուքներն: